ԹԵՐԵԶԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԲԱՌԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԴԵՐԸ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՏԵՔՍՏՈՒՄ՝ ԳԱԳԱԹՆԱԿԵՏԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հայտնի է, որ տեքստը ոչ թե լեզվական տարբեր մակարդակների միավորների խառնաշփոթ է, այլ համակարգված կառույց, որում բոլոր անդամների միջև գոյություն ունի փոխադարձ կապ և փոխազդեցություն:

Շատ հաճախ տեքստը սահմանվում է որպես հեղինակի մտադրության շրջանակներում իմաստով միմյանց հետ կապված ավարտուն նախադասությունների հաջորդականություն: Այդ նախադասությունների ամբողջությունը որոշակի տեղեկատվություն է հաղորդում ընթերցողին: Տեղեկատվության հաղորդման որոշակի մակարդակի վրա հաղորդումը հասնում է գագաթնակետի (Ю. Лотман):

Գագաթնակետ հասկացությունը մեր պատկերացմամբ հանդես է գալիս որպես այդպիսին՝ անկախ իր՝ մյուս երևույթների հետ ունեցած կապերից: Գագաթնակետը լարվածության ամենաբարձր կետն է, ինչ-որ իրադրության մեջ ցուցաբերած ամենասուր հուզմունքը: Գեղարվեստական տեքստում գագաթնակետ հասկացությունը, որպես կանոն, դիտարկվում է իրադարձությունների զարգացման տեսանկյունից: Այդ հասկացությունների շարքում են՝ հանգույցը, լարվածությունը և հանգուցալուծումը:

Բովանդակային տեսանկյունից գագաթնակետը որևէ իրական փորձություն է, որը առավելագույնս սրում է գեղարվեստական ստեղծագործության խնդիրը և որոշիչ դեր է խաղում՝ գործող անձանց ներքին որակները վեր հանելու գործում:

Գագաթնակետին նախապատրաստող լարվածությունը հիմնավորված է նախ և առաջ գեղարվեստական ստեղծագործության հեղինակի գործաբանական դիտավորությամբ: Այսինքն՝ հաշվի է առնվում հեղինակի մտադրությունը նրա՝ տեքստի կազմման գործում ունեցած կոնկրետ նպատակը: Ընդ որում՝ հեղինակի դերը այստեղ առաջնային է: Ստեղծելով տեքստը և հաղորդելով նրան որոշակի իմաստային բովանդակություն՝ հեղինակը այս ամենի հետ նաև արտահայտում է իր վերաբերմունքը տեքստի և դրա բովանդակության նկատմամբ: Տեքստում լարված իրավիճակ ստեղծելու համար հեղինակին անհրաժեշտ է ցուցադրել կոնֆլիկտային իրադրություն՝ ընթերցողի ուշադրությունը գրավելու համար և այնուհետ հեղինակը պետք է այդ իրադարձու-

թյունները այնպես զարգացնի, որ ստիպի ընթերցողին՝ սպասել կոնֆլիկտի հանգուցալուծմանը:

Հեղինակը գիտակցաբար դրդում է ընթերցողին անել որոշակի ենթադրություններ՝ դրանով իսկ իր համար նոր տեղեկություն ստանալով: Առանց դրա տեքստը չի կարող կատարել հաղորդակցական գործառույթ և կամուրջ դառնալ հեղինակից դեպի ընթերցող:

Այնուամենայնիվ, գեղարվեստական ստեղծագործության մեջ կոնֆլիկտային իրավիճակը ունի դրսևորման երկու ուղղություն՝ հեղինակի խոսքում և գործող անձանց խոսքային համակարգում: Գագաթնակետին նախորդող լարվածությունը առաջանում է որպես նկարագրվող կոնֆլիկտի արդյունք և իր արտահայտությունն է գտնում ինչպես հեղինակի այնպես էլ գործող անձանց պլանում: Քանզի լարվածությունը հիմնավորված է հեղինակի մտադրությամբ, այն անխուսափելիորեն արտահայտվում է հեղինակի խոսքում: Մյուս կողմից, լարվածությունը՝ որպես գործող անձանց հոգեվիճակ կոնֆլիկտային պայմաններում, արտահայտվում է նաև գործող անձանց ուղղակի խոսքում:

Լեզվական միավորների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լարվածություն արտահայտող բառային միջոցների կիրառումը հեղինակի և հերոսների խոսքում միանգամայն տարբեր են: Բացի դրանից, այս բառային միջոցների գործառույթը նույնպես տարբերակվում է հեղինակի և հերոսների խոսքում: Հեղինակի խոսքում լարվածությունը որպես կոնֆլիկտային իրավիճակում գործող անձանց հոգեվիճակի արտայատում՝ կարող է նկարագրվել բառերով, և, հետևաբար, բառային միավորները այստեղ կատարում են անվանողական գործառույթ: Գործող անձանց խոսքում լարվածությունը արտահայտվում է բարձր հուզական հոգեվիճակով, այդ իսկ պատճառով, կարելի է ասել, որ այստեղ լարվածություն արտահայտող միջոցները կլինեն ավելի ցայտուն արտահայտված (М. Петровский):

Գագաթնակետը, ինչպես նաև դրան նախորդող լարվածությունը, իր բնույթով իմաստային է՝ այսինքն իմաստ է արտահայտում, և սա պայմանավորված է նախ և առաջ նրանով, որ թե գագաթնակետը, թե լարվածությունը, սերտորեն կապված են իրական աշխարհի հետ: Այս իմաստային բնույթը անխուսափելիորեն արտայատվում է նաև լեզվում՝ հատկապես երևույթի իմաստը բացահայտող բառային միջոցների ընտրության ժամանակ:

Մի շարք գիտնականներ՝ որոնց թվում են Յ. Վերդիեվան, Խ. Առնոլդը, Գ. Շուրը, համակարծիք են, որ լեզվի բառիմաստային դասակարգման հիմնական սկզբունքը թեմատիկ դաշտի սկզբունքն է: այն բառային միավորների որոշակի բազմություն է, որոնք միմյանց կապված են ընդհանուր բառիմաստով

կամ ունեն իմաստային ընդհանրություններ: Սակայն, բառիմաստային շարքի միավորները կարող են վերաբերել տարբեր բառիմաստային կարգերի: Այսպիսով, այս կամ այն գեղարվեստական ստեղծագործության բառապաշարը՝ միավորված թեմատիկ դաշտի սկզբունքով, կարող է առաջնային դեր խաղալ գագաթնակետի ստեղծման գործում:

Այժմ դիտարկենք այն լեզվական միջոցները, որոնք օգտագործվել են գագաթնակետի ստեղծման մեջ Ջեյմս Ջոյսի "Պանդոկը" պատմվածքում: Պատմվածքի հիմքում ընկած է երիտասարդ աղջկա պատվի փոխհատուցման խնդիրը: Այստեղ որպես ելակետային բառ հադես է գալիս "to be perturbed" բայը, որը, մի քանի անգամ կրկնվելով պատմվածքում, նշարագրում է հերոսի հոգեվիճակը: Բացի ելակետային բառից՝ տեքստում հերոսների հոգեվիճակը արտահայտող բառերից կարելի է առանձնացնել հետևյալ բառային միավորները- "very anxious", "his hand had been so unsteady", "acute pain", "he felt his heart leap warmly in his throat", " to sit helplessly" և այլն: Տարբեր իմաստ ունեցող հետևյալ միավորները նկարագրում են հերոսի ներքին կռիվը՝ նրա հուզական անհավասարակշռությունը և տրամադրության կտրուկ փոփոխությունները: Բոլոր այս միավորները ամբողջությամբ վերցված արտայատում են պատմվածքի ընդհանուր թեման, իսկ լեզվական մակարդակի վրա կազմում են "to be perturbed" բառի թեմատիկ դաշտը:

Հերոսի ներաշխարհում կատարվող կոնֆլիկտի նկարագրման արդյունքում տեքստի հենց սկզբում մենք բախվում ենք լարված իրադարձությունների հետ, որոնք էլ իրենց հերթին ստեղծում են գագաթնակետին նախորդող լարվածությունը: Հերոսի՝ երիտասարդ Դորանի հոգեվիճակը պատկերող իմաստայնորեն տարբեր լեզվական միավորների գործածումը նպաստում է տեքստում լարված իրավիճակի սրացմանը: Դորանին անհանգստացնում է պանդոկի տիրուհու աղջիկը՝ Փոլին, որի անմեղությունից և անփորձությունից նա համարձակվել էր օգտվել, իսկ այժմ նա պետք է հատուցի իր այդ արարքի համար. Ստեղծված որությունից դուրս գալու միակ ելքը Փոլիի հետ ամուսնանալն է, սակայն, Դորանը, գիտակցելով հարցի լրջությունը, հապաղում է կնության առնել այդ «փոքրիկ գռեհկուհուն»: Նա նաև կարծում է, որ այդ խայտառակության պատճառով կարող է զրկվել իր՝ գինու վաճառահանման գրասենյակի աշխատանքից: Բացի այդ իր ընտանիքը չի հավանի Փոլլիի պես վատահամբավ աղջկան, իսկ ընկերները կբամբասեն ու կծիծաղեն իր վրա:

Իսկ այժմ, իր սենյակում անօգնական նստած, Դորանը մտքում մտաբերում է տեղի ունեցածի մանրամասնությունները և փորձում որևէ արդարացում գտնել իր արարքին: Նա ամեն կերպ փորձում է համոզել ինքն իրեն, որ

պարզապես զոհ է դարձել Փոլիի գայթակղությանը և ամենևին էլ մեղավոր չէ: Սակայն, մյուս կողմից, որպես հասուն տղամարդ՝ նա չի ցանկանում մեղքի ամբողջ բաժինը գցել Փոլիի ուսերին և զերծ մնալ պատասխանատվությունից: Դորանին շատ դժվար հանդիպում է սպասվում Փոլիի մոր՝ տիկին Մունիի հետ, որից էլ կախված է նրա հետագա ճակատագիրը: Դորանի ներքին կոնֆլիկտը հասնում է իր գագաթնակետին այն ժամանակ, երբ նրան հայտնում են, որ տիկին Մունին սենյակում սպասում է իրեն և նա իջնում է՝ նրա հետ զրուցելու: Աստիճաններից իջնելու ամբողջ ընթացքը ուղեկցվում է Դորանի ներքին հոգեվիճակի խիստ արտայայտված ցնցումներով, որը հեղինակը շատ պատկերավոր հաղորդում է փոխաբերության միջոցով: "He longed to ascend through the roof and fly away to another country where he would never hear again of his trouble, and yet a force pushed him down stairs step by step." Սակայն ընթերցողին այդպես էլ անհայտ է մնում Դորանի և տիկին Մունիի միջև տեղի ունեցած զրույցը, և միայն հեղինակի խոսքից պարզ է դառնում, որ գագաթնակետը հասել էր իր տրամաբանական հանգուցալուծմանը և հարցը լուծվել է ի շահ Փոլիի:

Այսպիսով, տեքստի վերլուծությունը ցույց է տալիս, որ տեքստում գագաթնակետի ստեղծման մեջ բառային միավորները առանցքային նշանակություն ունեն: Բառային միջոցների վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ այս կամ այն ստեղծագործության բառապաշարը, մասնակցելով գագաթնակետին նախապատրաստող լարվածության ստեղծմանը, նպաստում է տվյալ ստեղծագործության թեմայի բացահայտմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Кухаренко В. Интерпретация текста. Издание второе переработанное. Москва «Просвещение» 1988.
2. Лотман Ю. Структура художественного текста. – Л.: Искусство, 1970.
3. Петровский М. Морфология. Арсеньтика. М. , 1972.
4. http://www.storybites.com/joyceboarding2.htm.